ԱՄՓՈՓՈՒՄ

2007թ-ի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ դատարաններում գործերի քննության վիճակագրական տվյալներ.

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

1. ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

ՀՀ առաջին ատյանի դատարաններ մուտք է եղել 1818 քրեական գործ, որոնցից 1295-ը քննվել են ըստ էության և կայացվել դատավճիռներ (այդ թվում 84-ը անչափահասների նկատմամբ), 81-ը կարճվել են (այդ թվում 4-ը անչափահասների նկատմամբ), 25-ով անմեղսունակների նկատմամբ կիրառվել են բժշկական բնույթի հարկադրական միջոցներ, 13-ը ուղարկվել են լրացուցիչ նախաքննության, 11-ը հանձնվել են ըստ ընդդատության, 393-ը (այդ թվում 16-ը անչափահասների նկատմամբ), փոխանցվել են 2007թ. 2-րդ կիսամյակ:

Համեմատության կարգով նշենք, որ 2006թ. 1-ին կիսամյակի ընթացքում առաջին ատյանի դատարաններ մուտք են եղել 2184 քրեական գործ, որոնցից 1503-ը քննվել են ըստ էության և կայացվել դատավճիռներ (այդ թվում 57-ը անչափահասների նկատմամբ), 57-ը՝ կարճվել են (այդ թվում 2-ը անչափահասների նկատմամբ):

2007թ. 1-ին կիսամյակում դատապարտվել է 1779 մարդ (այդ թվում 123 անչափահաս), 271 անձանց (այդ թվում 5 անչափահաս) նկատմամբ գործերը կարճվել են, 23 անմեղսունակ անձանց նկատմամբ կիրառվել են բժշկական բնույթի հարկադրական միջոցներ, 17-ի վերաբերյալ գործերը հանձնվել են լրացուցիչ նախաքննության, 5 անձ արդարացվել է, որոնցից 1 անձ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում, 2 անձ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանում, 1 անձ Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանում, 1 անձ Արարատի մարզի առաջին ատյանի դատարանում:

Նշենք, որ 2006թ. ընթացքում հանրապետությունում արդարացվածների թիվը կազմել է 4՝ Երևանում՝ 3 և մարզերում՝ 1, իսկ 2005թ. ընթացքում հանրապետությունում 6՝ Երևանում՝ 1 և մարզերում՝ 5:

Այսպիսով, քննվել և դատավճռի (որոշման) կայացմամբ ավարտվել է 1425 քրեական գործ, որոնցով դատապարտվել են 1779 և արդարացվել 5 անձինք:

ՀՀ առաջին ատյանի դատարանների կողմից քննվել են 5142 միջնորդություններ (այդ թվում՝ 22 գրավի /16-ը բավարարվել են, 5-ը մերժվել, 1-ը թողնվել է առանց քննության/, որոնցից 4980-ը՝ բավարարվել են, իսկ 158-ը մերժվել, 4-ը թողնվել են առանց քննության:

Բողոքարկման ենթակա 1425 դատավճիռների և որոշումների դեմ բերվել են 352 (24,7%) վերաքննիչ բողոք ՀՀ քրեական վերաքննիչ դատարան և 47 վճռաբեկ բողոք ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատ:

1026 (72%) (1425-(352+47)) դատավճիռ (որոշում) չի բողոքարկվել և մտել օրինական ուժի մեջ:



A – մուտք են եղել քրեական գործեր

B – կայացվել են դատավճիռներ

2.ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ քրեական վերաքննիչ դատարան մուտք է եղել 352 գործ, որոնցից 194-ով (55,1%) կայացվել է դատավճիռ, 13-ով (3,7%) գործի վարույթը կարճվել է, 71-ը (20,2%) թողնվել է առանց քննության, 2-ը (0,5%)՝ ուղարկվել է լրացուցիչ նախաքննության, 7-ը (2%)՝ առաջին ատյանի դատարանի՝ քրեական գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու կամ այլ որոշումները բեկանվել ուղարկվել են նոր դատաքննության, 65 (18,5%) գործ փոխանցվել է 2007թ. 2-րդ կիսամյակ:

ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի կայացրած 194 (այդ թվում 13 կարճում) դատավճիռների (որոշումների) դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատ բերվել է 109 (56,2%) բողոք, որոնցից 5-ը (4,6%) թողնվել են առանց բավարարման:

Փաստորեն, ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի կայացրած 194 դատավճիռներից (որոշումներից) 85-ը (43,8%) չեն բողոքարկվել և մտել են օրինական ուժի մեջ:

2007թ.առաջին կիսամյակ



3. ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատ մուտք է եղել 138 վճռաբեկ բողոք, որից քննության է առնվել 126-ը, 9 բողոք հետ է վերցվել, 68-ը վերադարձվել, 18 բողոք թողնվել է առանց քննության, 2-ը մերժվել, 3-ը մնացել անփոփոխ, իսկ 12-ը փոխանցվել են 2007թ. 2-րդ կիսամյակ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատ մուտք եղած 138 բողոքներից 27-ը բերվել են ՀՀ առաջին ատյանի դատարանի դատավճիռների ու որոշումների, իսկ 89-ը՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի դատավճիռների ու որոշումների դեմ, 20-ը ՀՀ առաջին ատյանի և ՀՀ քրեական վերաքննիչ դատարանների դատավճիռների ու որոշումների դեմ, 2-ը ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի որոշումների դեմ:

Ընդհանուր առմամբ, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից քննության առնված 126 (նյութերի) դատավճիռների ու որոշումների դեմ բերված բողոքներով անփոփոխ են մնացել 5-ը (4%), բեկանվել 26 (20,6%) դատավճիռ և որոշում:



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

1. ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

ՀՀ առաջին ատյանի դատարաններ 2007թ. 1-ին կիսամյակում մուտք է եղել 22679 քաղաքացիական գործ, որոնցից 11427-ով՝ կայացվել են վճիռներ (այդ թվում՝ 8251-ը հայցի բավարարմամբ), 1475-ը կարճվել են, 2186-ը՝ թողնվել են առանց քննության,68-ը հանձնվել են այլ դատարանների, 7523-ը՝ փոխանցվել են 2007 թվականի 2-րդ կիսամյակ:

Համեմատության կարգով նշենք, որ 2006թ. 1-ին կիսամյակի ընթացքում առաջին ատյանի դատարաններ մուտք են եղել 29176 գործ, իսկ կայացվել է 20019 վճիռներ:

Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանների կողմից կայացված 11427 վճիռների դեմ բերվել է 1679 վերաքննիչ բողոք և 213 վճռաբեկ բողոք: Փաստորեն, 9535 (83,4%) վճիռներ չեն բողոքարկվել և մտել են օրինական ուժի մեջ:



A – մուտք են եղել քաղաքացիական գործեր

B – կայացվել են վճիռներ

C – բավարարվել են

2. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան մուտք է եղել 2682 գործ, որից 80 գործ վերադարձվել է, վարույթ են ընդունվել 2602-ը, 1234-ով կայացվել է վճիռ կամ որոշում, այդ թվում 91-ով՝ կարճման, 445-ը՝ թողնվել է առանց քննության, 923-ը գտնվում են վարույթում:

Առաջին ատյանի դատարանների կողմից կայացված վճիռների համեմատ նույնաբովանդակ են վերաքննիչ դատարանի 1151 վճիռ, ամբողջությամբ այլ բովանդակությամբ՝ 302, մասնակի այլ բովանդակությամբ՝ 226 վճիռ:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի կայացրած 1234 վճիռներից ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ բողոքարկվել են 684-ը (55,4%), որոնցից 592-ը (86,5%) վերադարձվել է, 550 (44,6%) վճիռ չի բողոքարկվել, մտել է օրինական ուժի մեջ:



3. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ տնտեսական դատարան մուտք է եղել 4789 գործ, որոնցից 1371 -ով կայացվել է վճիռ և որոշում, այդ թվում 225-ով՝ կարճման, 264-ը՝ թողնվել է առանց քննության, 3 գործ ուղարկվել է ըստ ընդդատության, 2926-ը՝ փոխանցվել է 2007թ. 2-րդ կիսամյակ:

ՀՀ տնտեսական դատարանի կայացրած 1371 վճիռներից ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ բողոքարկվել է 296-ը (21,6%), որոնցից 240-ը (81,1%) թողնվել են առանց բավարարման, 1075(78,4%) վճիռ չի բողոքարկվել, մտել է օրինական ուժի մեջ:



4. ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ մուտք են եղել 1228 բողոք, որոնցից 1170-ով (95,3%) կայացվել է որոշում, 12-ը (1%) հետ է վերցվել, իսկ թվով 46 բողոքներ (3,7%) փոխանցվել են 2007թ. 2-րդ կիսամյակ:

1170 վճռաբեկ բողոքներից 110-ը (9,4%) բավարարվել են (այդ թվում մասնակի), որոնցից 88 բողոքը բավարավել է վճիռը բեկանվել է ամբողջությամբ 22-ը՝ բավարարվել են վճիռը բեկանվել է մասնակի, 37 (3,2%)՝ բողոք մերժվել է, 8-ով (0,7%)՝ գործի վարույթը կարճվել է, 991 բողոք վերադարձվել է, 14 վճիռ բեկանվել և փոփոխվել է, 7 վճիռ բեկանվել է հայցը կամ դիմումը թողնվել է առանց քննության, 39-ը որոշում (վերացվել) վերանայվել է, 10 վճիռ բեկանվել է՝ օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի վճռին:

1228 վճռաբեկ բողոքներից 213-ը բերվել են առաջին ատյանի դատարանի, 684-ը՝ ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի, 296-ը՝ ՀՀ տնտեսական դատարանի, 7-ը՝ ժողդատարանների վճիռների դեմ: